Անիծեալ գիշերներուն մէջ, երբ երկինքը նոսր կը թափէր լորձուքի նման, երբ հայ քաղաքը կ'ապրէր սոսկուծ վախը, երբ մտալլ տուններու դռները զարդարուած էին արեւնախանձ նշաններով, ոճիրին Տօնը լայու համար մենք մեծ յոյսերով սպասեցինք անոր, բայց ան երբեք չեկաւ:

Մեր Յիսուսը սոսկալիտօրէն լուծ է եւ, ան երբեք ապրած չէ հայ հոգուր ներքնախորը, վասնզի ո՞չ ոք տեսած է զայն:

Անիծեալ գիշերներուն մէջ, երբ երկինքը նոսր կը թափէր լորձուքի նման, երբ հայ քաղաքը կ'ապրէր սոսկուծ վախը, երբ մտալլ տուններու դռները զարդարուած էին արեւնախանձ նշաններով, ոճիրին Տօնը լայու համար մենք մեծ յոյսերով սպասեցինք անոր, բայց ան երբեք չեկաւ:

Մեր Յիսուսը սոսկալիտօրէն լուծ է եւ, ան երբեք ապրած չէ հայ հոգուր ներքնախորը, վասնզի ո՞չ ոք տեսած է զայն:

Անիծեալ գիշերներուն մէջ, երբ երկինքը նոսր կը թափէր լորձուքի նման, երբ հայ քաղաքը կ'ապրէր սոսկուծ վախը, երբ մտալլ տուններու դռները զարդարուած էին արեւնախանձ նշաններով, ոճիրին Տօնը լայու համար մենք մեծ յոյսերով սպասեցինք անոր, բայց ան երբեք չեկաւ:

Մեր Յիսուսը սոսկալիտօրէն լուծ է եւ, ան երբեք ապրած չէ հայ հոգուր ներքնախորը, վասնզի ո՞չ ոք տեսած է զայն:

Անիծեալ գիշերներուն մէջ, երբ երկինքը նոսր կը թափէր լորձուքի նման, երբ հայ քաղաքը կ'ապրէր սոսկուծ վախը, երբ մտալլ տուններու դռները զարդարուած էին արեւնախանձ նշաններով, ոճիրին Տօնը լայու համար մենք մեծ յոյսերով սպասեցինք անոր, բայց ան երբեք չեկաւ:

Մեր Յիսուսը սոսկալիտօրէն լուծ է եւ, ան երբեք ապրած չէ հայ հոգուր ներքնախորը, վասնզի ո՞չ ոք տեսած է զայն:

Անիծեալ գիշերներուն մէջ, երբ երկինքը նոսր կը թափէր լորձուքի նման, երբ հայ քաղաքը կ'ապրէր սոսկուծ վախը, երբ մտալլ տուններու դռները զարդարուած էին արեւնախանձ նշաններով, ոճիրին Տօնը լայու համար մենք մեծ յոյսերով սպասեցինք անոր, բայց ան երբեք չեկաւ:

Մեր Յիսուսը սոսկալիտօրէն լուծ է եւ, ան երբեք ապրած չէ հայ հոգուր ներքնախորը, վասնզի ո՞չ ոք տեսած է զայն:

ՆԱՅՈՒՆ ՅԻՍՈՒՍԸ

Ես կը սիրեմ Յիսուս Նազովրեցիին եւ կը հաւատամ անոր:

Կը սիրեմ Պղատոնը եւս, եւ Տանթէն, եւ կը հաւատամ անոնց:

Հիւստիստիկան ճարտարապետական ձեւի պարզ գծերու խորանկարի վրայ Պղատոնը կը հանդիսանայ ակնբերու ու պայծառ, յղի գաղափարի մաքրամաքուր լոյսերով, աչքերը յառած կեանքի հանդուրժեամբ քանդակելով, եւ ինչ որ կ'ընէ իր վերջին յայտնատեսական խրթին տեսիլքները, քանդակուեալ շրջապատներով, խնդրութեամբ քանդակուած երկինքներով, ուր դժոխքն ու արքայութիւնը կը հաստատէ, այնուամենայնիւ վստահ են ու վեճ իր քայլերը եւ իր անձը գծուած է մեր աչքերուն առջեւ իր ամբողջութեամբ:

Յիսուսը, մեր հոգիներուն մէջ, սքողուած է գունատ անստուգութեամբ մը:

Ժագով Սմիթ մը իրաւունք ունի զայն նստեցնելու Ֆլամանտացի ընտանիքի սեղանին շուրջը: Մուրիլլո մը կամ Վեյսագեղ մը կարող են նշաւակել անոր մարմինը եւ անոր աչքերուն մէջ դնել վառած ածուխ, վասնզի սպանիացիին կը պահէ զայն իր հոգուր դժոխքին մէջ, հոգի մը, որ միշտ լեցուն է կրօնական տուայտանքներով: Եւ կապոյտ երկինքի տակ, կոպտուս ճանապարհներուն վրայ, իտալացիին կը գծէ անոր պատկերը որպէսզի կարողանայ տեսնել զայն ամէն տեղ եւ միշտ՝ իր զօրաւոր տէրը եւ եղբորը:

Բայց ո՞վ տեսած է, ո՞վ կը ճանչնայ Հայուն Յիսուսը:

Քրիստոնէութիւնը ընդունելով մեր մէջ, այն ազատամիտ եւ համակրելի ձեւով, որ գիտնէր, զժբքատարար աղքատ մնացած է, ան կարծես չունի ամենազխաւորը՝ սիրտը, եւ Յիսուս հոն բռնի կը մնայ:

Մեր Յիսուսը սոսկալիտօրէն լուծ է եւ, ան երբեք ապրած չէ հայ հոգուր ներքնախորը, վասնզի ո՞չ ոք տեսած է զայն:

Հրատարակում

ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ԲՐՈՆԻԿՆԵՐ (ԳԻՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ)

CAUCASUS CHRONICLES. NATION BUILDING AND DIPLOMACY IN ARMENIA, 1993-1994, LEONIDAS T. CHRYSANTHOPOULOS, GOMIDAS INSTITUTE BOOKS, PRINCETON AND LONDON, 2002

ԹՈՒՐԵՔԻԱ - ՀԱՅԱՍՏԱՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թուրքիա կը ճանչնայ Հայաստանի անկախութիւնը 1991ի Դեկտեմբերին, սակայն դիւանագիտական կապեր չեն հաստատուիր երկու երկիրներուն միջեւ, որովհետեւ Անգարա հետեւեալ նախապայմանները կը դնէ. Երեւան պէտք է յայտարարէ, թէ երկու երկիրներուն միջեւ հողային պահանջներ չկան, թէ՛ ներկայ սահմանները անվիճելի են եւ կարելի չէ գանձել փոխել նոյնիսկ խաղաղ միջոցներով, թէ՛ Հայկական Յեղասպանութեան հարցը երբեք պիտի չարձարծուի: Հայաստան յտակօրէն կը յայտարարէ, թէ կը փափաքի լաւ յարաբերութիւններ մշակել Թուրքիոյ հետ, սակայն ոչ՝ այս նախապայմաններով:

«Հեզնականը այն էր, որ երկու երկիրները տարբեր պատճառներով կ'ուզէին դիւանագիտական կապեր հաստատել»- կը գրէ Քրիստանթոփոլոսը: Հայաստան՝ Թուրքիայի տնտեսական նկատառումներով, որովհետեւ Թուրքիա կամուրջ մը պիտի ըլլար Միջերկրականէն ծովու եւ ցամաքի ճամբաներով ուստեստեղէն եւ անհրաժեշտ նիւթեր ներածելու համար, իսկ Թուրքիա կը ձգտէր Հայաստանը առնել իր տնտեսական հակակշիռին տակ եւ առիթ ունենալ Արցախի հարցին մէջ միջնորդի աւելի համոզիչ դեր կատարելու:»

Հակառակ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ հայեցակէտերու տարբերութեան՝ հանդիպումներ տեղի կ'ունենային քաղաքական եւ տնտեսական մակարդակներու վրայ, որոնք սակայն սառեցուած են Գերաջարի գրաւումէն ետք: Հայաստանի արտաքին գործոց նախարար Բաքմի Յովհաննէսեան պաշտօնազրկուած է Թուրքիոյ նկատմամբ իր կարծի կեցուածքին պատճառով: Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի կողմէ Թուրքիայէն ցորեն փոխ առնելու եւ երկտրականութիւն գնելու դիմում մը մերժուած է Պաքմի մէջ ստեղծուած դժգոհութեան պատճառով: Այսուհանդերձ Թուրքիոյ թուրքական, որ Հայաստան մասնակցի Սեւ ծովու տնտեսական գործակցութեան ժողովին, թէեւ Հայաստան ծով չունի, կը գրէ յոյն դեսպանը:

Քրիստանթոփոլոսի համաձայն, Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ գլխաւոր խոչընդոտը Արցախի տագնապն էր: «Թուրքիոյ համար Արցախի հարցը սպառնալից վարկի հարց էր», կը գրէ ան: Անգարա կը յայտարարէր, թէ խաղաղ լուծում կ'ուզէր, սակայն երբեմն գինուորական միջամտութեան սպառնալիքներ կ'ուզէր: Մոսկուայի եւ Կարսի մէջ 1923ին ստորագրուած համաձայնագրերը ներառեցին Սեւ ծովի շրջանը իրենց թէ գոյութիւն ունենալու պայմանները: Սակայն նախապէս Ալեքսանդրապոլի գաղտնի իրաւունքները իրենց իրաւունքները օգտագործելու: Սակայն միայն իրենց իրաւունքները չէին իրաւունքները, որոնք չէին իրաւունքները: Հայաստանի մէջ, կը գրէ յոյն դեսպանը, եւ կ'աւելցնէ, թէ Հայաստան միջուկով վերաբերում ցոյց տուած է նման սպառնալիքներու նկատմամբ եւ պահանջած է ռուսական զինուորական ներկայութիւն՝ Թուրքիոյ հետ իր սահմանին վրայ:

Հայաստանի մէջ քրտական համայնքին այցելութիւնը մը տակ էտք Քրիստանթոփոլոս կ'եզրակացնէ, թէ Հայաստանի քրտները ամէնէն աւելի ուրախ քրտական համայնքն էին, եւ թէ՛ Հայաստան աշխարհի միակ պետութիւնն էր, որ ամբողջական ազատութիւն տուած էր քրտներուն: Հայաստանի քրտները թէեւ բարոյապէս կը գորակցէին Թուրքիոյ քրտներուն ազատագրական պայքարին, սակայն գործնապէս ոչ մէկ օգնութիւն կը ցուցաբերէին, «որովհետեւ Թուրքիա ճիշդ այդ կ'ուզէր, Հայաստանը գրաւելու եւ զիրենք եւս ոչնչացնելու համար», ինչպէս դեսպանին յայտնած է քրտ մտաւորական մը:

Թուրքիա յաճախ ամբաստանութիւններ կ'ուզէր Հայաստանի՝ ըսելով, թէ Քրտական Աշխատաւորական կուսակցութիւնը գինեալներ կը մարզէր Հայկական հողերու վրայ: Երբ Հայաստան պահանջած է վաւերական փաստեր, Թուրքիա ռզարկած է վիտէօբրիզ մը, որուն մէջ գինեալներ արմաւենիներու շուրջ կը մարզուէին: Հայաստանի մէջ արմաւենիներ չկային, հետեւաբար անկարելի էր, որ վիտէօբրիզը արմաւենիներու ըլլար ձու: «Չի բացատրուիր, թէ Թուրքիա նոյն վիտէօբրիզ ռզարկած ըլլալ Աթէնքի իշխանութիւններուն», կը գրէ Քրիստանթոփոլոսը՝ ակնարկելով յոյնեո ղէմ թրքական նմանօրինակ ամբաստանութիւններու:

ԹՐԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՄԻ ՄՈՒՆՆԱԿԱՆԻՔ

Յունաստանի նախկին դեսպանին կողմէ կատարուած ամէնէն ուժեղ բացառաբար կը վերաբերի 1993ի Հոկտեմբերին Թուրքիոյ կողմէ Հայաստան ներխուժելու դիտարկութեան մը հաւանականութեան: Մոսկուայի խորհրդարանին գրաւումին ժամանակ Հայաստանի Գերագոյն խորհուրդը Հայաստանի զինուորական ուժերը դրած էր պատրաստ վիճակի մէջ՝ Հայաստանը պաշտպանելու համար թրքական հաւանական յարձակումի մը դէմ, այն պարագային, երբ Թուրքիոյ եւ Հայաստանի սահմանին հսկող 10 հազար ռուս զինուորները անմիջապէս Ռուսիա վերադառնալու հրահրուող ստանալին:

«Նախագահ Տէր Պետրոսեան տարբեր աղբիւրներէ ստացած իր տեղեկութիւններուն վրայ հիմնուելով՝ համոզուած էր, թէ Թուրքիա պիտի փորձէր օգտուել Ռուսիոյ մէջ տեղի ունեցող լուրջ իրադարձութիւններէ՝ Հայաստանը գրաւելու համար, պատրուակելով քրտական հարցը

կամ նախիջեւանի պաշտպանութիւնը,՝ կը գրէ Քրիստանթոփոլոսը: Ան գաղտնի սպասարկութիւններէ տեղեկացած էր, թէ Թուրքիոյ Ազգային անվտանգութեան խորհուրդը քննած էր թրքական բանակին իրաք եւ Հայաստան թափանցումի հաւանականութիւնը՝ Քրտական Աշխատաւորական կուսակցութեան հայուկային խումբերը ոչնչացնելու համար: Նոյն գիշերը, 5 Հոկտեմբերին, թրքական զինուած ուժեր թափանցեցին իրաք կատաղօրէն Քրտական Աշխատաւորական կուսակցութեան անդամ զինեալներ փնտռելով:»

Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպանը քանի մը օր ետք Քրիստանթոփոլոսի յայտնած է, թէ Ֆրանսական գաղտնի սպասարկութիւններուն համաձայն, Ռուսիոյ խորհրդարանի նախագահ Ռուսլան Նասպուլաթովի (չեչէն) եւ թրքական իշխանութիւններուն միջեւ համաձայնութիւն մը գոյացած է՝ «սահմանափակ տարողութեամբ թափանցումներ կատարելու Հայաստանի մէջ, քրտական հարցին պատրուակով, ինչպէս նաեւ Վրաստանի մէջ՝ Արթաշիոյ գորակցելու նպատակով»: Ֆրանսական աղբիւրները կ'ըսէին, թէ՛ «Հայաստանի մէջ թրքական թափանցումը տեղի պիտի ունենար Նասպուլաթովի հրահանգով, ռուսական ուժերու Հայաստանէն հեռացումէն անմիջապէս ետք»: Քրիստանթոփոլոս կը գրէ, թէ հետագային Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանը եւս հաստատած է այս տեղեկութիւնները:


Հայաստանի անվտանգութեան նախարար Վազգէն Սարգսեան Քրիստանթոփոլոսի յայտնած է, թէ թրքական իշխանութիւնները տեղեկ էին Մոսկուայի մէջ լուրջ իրադարձութիւններու հաւանականութեան եւ այդ պատճառով Սեպտեմբերէն սկսեալ իրենց զինուորական ներկայութիւնը բազմապատկած էին Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանին վրայ: Թուրքիա իր գինուորական ուժերը բազմապատկած էր նաեւ Նախիջեւանի սահմանին վրայ: Աւելին, Թուրքիա գինուորական պատուիրակութիւն մը Հայաստան այցելած էր Եւրոպայի Ապահովութեան եւ Գործակցութեան ժողովին առաջնութիւններուն ծիրին մէջ եւ ուզած էր այցելել Հայաստանի սահմանները Ազգայնական եւ Թուրքիոյ հետ: Հայաստանի զինուորական իշխանութիւնները չէին արտօնած սահմանները այցելել ցամաքի ճամբով եւ միայն բարձրէն թռչող օդանավով մը պտտուցած էին զանոնք, «որպէսզի անոնք չկարենային զինուորական տեղեկութիւններ հաւաքել Հայաստանի պաշտպանական դիրքերուն վերաբերելով», կը գրէ Քրիստանթոփոլոսը:

«Պետութիւնը գիտէր, թէ այնքան ատեն որ ռուսական ուժերը կը գտնուէին Հայաստանի մէջ, Թուրքիա պիտի չհամարձակուր յարձակուի: Այդ պատճառով է, որ 2-3 Հոկտեմբերի տակառաջակցութեան շարքի մէջ իր ռուս պաշտօնակիցին հետ, որ կը վստահեցնէր, թէ ռուսական բանակը կը գորակցէր նախագահ Ելցինի, եւ թէ՛ ռուսական գործակցութեանը Հայաստանէն տուն կանչելու հարց չկար», կը գրէ յոյն դեսպանը:


Քրիստանթոփոլոսը հարց կու տայ, թէ արդեօք Թուրքիա նախապէս տեղեկ էր Ռուսիայի մէջ տեղի ունենալիք իրադարձութիւններէն: «Միայն Անգարայի իշխանութիւնները կ'ուզէին ըսել, կը գրէ ան:՝ Սակայն այն իրողութիւնը, թէ Մարտիանի տեղեկ էր, կ'աւելցնէ հաւանականութիւնը:»

Քրիստանթոփոլոսը նախիջեւանի մէջ թրքական ուժերու բազմացումը առանց վարանումի կը վերաբարէ Արցախի ուժերուն կողմի Ֆիզուլիի գրաւումին: «Այսուհանդերձ Ֆրանսական եւ ամերիկեան գաղտնի սպասարկութիւնները կ'ուզէին տեղեկութիւնները կ'ուզէին հաստատել, թէ Նասպուլաթովի եւ Թուրքիոյ վարչապետ Թանսու Չիլըրի միջեւ կար որոշ համաձայնութիւն մը՝ թրքական վերահսկողական յարձակումներ գործելու Հայաստանի եւ Վրաստանի վրայ, որքան ալ անհաստատի թուի ասիկա», կը գրէ Քրիստանթոփոլոսը:

Ան կ'եզրակացնէ, որ եթէ օր մը թրքական իշխանութիւնները հաստատեն Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու տեղեկութիւնները, ապա «անիկա ցոյց պիտի տայ, թէ այդ ժամանակներուն Թուրքիա ինչպիսի՞ դեր ուզած է իսպալ կողմասի մէջ»: Աւելի ուշ, 1993ի Փետրուարին դարձեալ թրքական զինուորական արտասովոր շարժումներ կը նկատուին Հայաստանի եւ Թուրքիոյ սահմաններուն վրայ: Հայաստանի արտաքին



Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ Բարաքալայի սահմանը:



Ազերիներու կողմէ ռուսներու թրախ դարձած շէք մը՝ սահմանային շրջանի մը մէջ:



Յոյն դեսպանը՝ Թուրքիոյ հետ Հայաստանի սահմանին մօտ:



Հայ գինուորներ՝ Տաւուշի մարզին մէջ:

գործոց նախարար Վահան Փափագեան կը հրահարէ ՕԹԱՆի անդամ երկիրներու դեսպանները՝ մտահոգութիւն յայտնելով, թէ Պաքու հաւանաբար պատերազմ պիտի յայտարարէ Հայաստանի դէմ եւ հաւանական է, որ նախագահ Ալիեւ Թուրքիա իր այցելութեան առիթով գինուորական օգնութիւն խնդրած ըլլար: Հայաստանի իշխանութիւնները կը խնդրէին ՕԹԱՆի միջամտութիւնը: Միացեալ Նահանգներու դեսպանը համոզիչ չէր նկատեր Փափագեանի մտահոգութիւնները: Այսուհանդերձ որոշուած է, որ արտաքին գործոց փոխ նախարար Ժիրայր Լիպարիտեան Թուրքիայի միջոցով «հասկնալու համար Անկարայի ընդ նպատակները եւ Թուրքիայէն ինչո՞րք, որ ունի չիլիզի գեր խաղաղ շրջանին մէջ»:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԵՐԿՈՒՇԱՐԹԻ

Քրիստանթոփոլոսի համար Հայկական Յեղասպանութեան ճշմարտութիւնը անվիճելի է: «Օսմանեան կայսրութեան մէջ Հայկական Յեղասպանութիւնը, որ սկիզբ առաւ 1895ին, իր գագաթնակէտին հասաւ 1915ին եւ աւարտեցաւ 1920ին կամ 1923ին, ամբողջութեամբ վաւերացուած պատմական իրողութիւն մըն է, որ Թուրքիա կը մերժէ ընդունել», կը գրէ ան եւ կ'աւելցնէ. «Երբեք չեմ կրցած հասկնալ, թէ Թուրքիա ինչո՞ւ կը յամառի ժխտել Հայկական Յեղասպանութիւնը»:

«Հայաստանի նկատմամբ Թուրքերու վախերը չափաւնջուած չեն, կը գրէ Քրիստանթոփոլոսը: Թէեւ շատ կը կասկածիմ, թէ Հայաստան երբեք չի կրցար պահանջ պահել ներկայացնել Թուրքիոյ, որովհետեւ բաւարար թիւով հայեր չկան զանոնք վերաբանակեցնելու համար այն հողերուն վրայ, որոնք սկզբնաւորված կարելի է վերադարձնել»:

Ամէն անգամ, որ Քրիստանթոփոլոսը թուրք մտաւորականներու հետ խօսած է Հայկական Յեղասպանութեան մասին, անոնցմէ յստի է նոյն բացատրութիւնը, թէ հայերը ապահովական նկատառումներով Թուրքիոյ մէջ վայրէջք միւսը տեղափոխելը ցեղասպանութիւնն է: «Իմ սովորական հարցումս կ'ըլլար՝ ինչո՞ւ այսօր չէք փորձեր Պոլսէն Դամասկոս քաղաքը առանց ուսելիքի եւ զուրի, տեսնելու համար, թէ ի՞նչ կը պատահի: Անշուշտ երբեք պատասխան մը չեմ ստացած», կը գրէ ան:

Քրիստանթոփոլոս կը հաւատայ, թէ Թուրքիա յամառօրէն պիտի շարունակէ ժխտումի իր քաղաքականութիւնը, կը գրէ ան: Հայկական Յեղասպանութեան ճանաչումը պիտի նշանակէ հողի կորուստ կամ նոյնիսկ՝ հողերու վերադարձի քննարկում:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԵՐԿՈՒՇԱՐԹԻ

Իրեւ նախկին խորհրդային երկիր՝ Հայաստանի հետ գործակցելու եւրոպական Միութեան հետաքրքրութիւնը կը մնար մարդասիրական եւ թեքնիք օժանդակութեան սահմաններուն մէջ, Արցախի հարցին պատճառով: Իրեւ եւրոպական Միութեան ներկայացուցիչ Քրիստանթոփոլոս իր պատրաստած առաջին տեղեկագիրով եւրոպական աւելի գործօն ներկայութիւն կը պահանջէր Հայաստանի մէջ: Մինչ Ռուսիա կը փորձէր ձեռնարկական հակակշիռն տակ առնել Արցախի հարցը, յոյն դեսպանը կը փորձէր եւրոպական Համայնքը համո-

զել, որ շրջանին մէջ իր շահերը պաշտպանէր Հայաստանի հետ քաղաքական, տնտեսական եւ գինուորական գործակցութեամբ, ինչ որ նաեւ պիտի ծառայէր Հայկական իշխանութիւններուն բացատրելու, թէ ռուսական հակակշիռն տարբեր ընտրանքներ գոյութիւն ունէին: «Նորհրդային Ռուսիոյ աւանդը բաւարար չէր Հայաստանը արդի, ազատ եւ բարգաւաճ երկիր մը վերածելու համար», կը գրէ ան:

Եւրոպական Միութեան համար իր պատրաստած տեղեկագիրին մէջ Քրիստանթոփոլոս նաեւ կը նշէ, թէ կազմար խողովակը Հայաստանէն անցնելու տարածարանական ընտրանքն է, պայմանաւ որ քրտական հարցը նախապէս լուծուած ըլլայ: Ան նաեւ կը գրուշացնէ, որ եթէ Արցախի հարցը չլուծուի, Եւրոպական Միութիւնը պիտի չկարենայ օգտուիլ Ղազախստանի քարտիզը Թուրքիոյ վրայով Միջերկրականի ափերը հասցնող կազմար խողովակին քարտիզներէն:

Իր տեղեկագիրին մէջ Քրիստանթոփոլոս կը չեչտէ Միւնքի խորհրդակցութիւնը միջոցով Արցախի հարցին քաղաքական լուծում մը գտնելու համար: Քրիստանթոփոլոսը գրուշացնելով, որ այսպէս Միւնքի խորհրդակցութիւնը ձախողութիւնը պիտի առաջնորդէ շրջանին մէջ ռուսական զինուորական ուժերու տարածումին:

Յոյն դեսպանը կը փորձէ Եւրոպական Միութեան գորակցութիւնը ապահովել Հայաստանի որդեգրած սեփական դրամաշիջին՝ իրեւ նախաքայլ Եւրոպական Միութեան ազդեցութիւնը գործնելու կողմասի մէջ, սակայն անոր ճիգերը կը մնան ապարդիւն: «Ոչ ոք կ'ուզէր օգնել հայերուն, ոչ ոք հետաքրքրուած էր ուժ բանեցրելով Թուրքիոյ վրայ, որ իր սահմանները բանար Հայաստանի մարդասիրական օժանդակութիւն հասցնելու համար», կը գրէ ան:

Անպատասխան կը մնայ նաեւ Մեծամորի կորիզային կայանը վերաշխտացնելու Հայաստանի օգնութեան խնդրանքը, զոր Քրիստանթոփոլոս Եւրոպական Միութեան կը փոխանցէ իր պետութեան միջոցով, թէեւ Հիւլիական Ուժանիւթի Միջազգային Յանձնարարութեամբ յայտարարած էր, թէ Մեծամորը կենսոլորտային վտանգ չէր սպառնար:

Իր պաշտօնավարութիւնը չաւարտած Քրիստանթոփոլոս կը կանչուի Յունաստան՝ ստանձնելու համար Եւրոպական Միութեան Յունաստանի նախագահութիւնը համակարգելու պաշտօնը: Սակայն ան իր մեկնումէն քանի մը օր առաջ, Յունաստանի տեղեկութիւն կը ստանայ, թէ Ազգայնական օգնականներով պիտի ուղարկուէր Ստեփանակերտը, եւ անմիջապէս տեղեկ կը պահէ Հայաստանի իշխանութիւնները: 15 վայրկեան ետք Ստեփանակերտ կը ռմբակոծուի, սակայն ոչ մէկ զոհ կ'արձանագրուի. բնակչութիւնը վերջին վայրկեանին յաջողած էր ապաստանարանները ինչեւ...:

Միշտ Հայաստանին օգնելու պատրաստակամութեամբ եւ անխնայ կենսուճակութեամբ գործող այս դիւանագիտէ չ'ուզեր բաժնուիլ Հայաստանին, հակառակ երկրին մէջ իր դիմագրուած կենցաղային եւ ալլազան դժուարութիւններուն: «Օղանաւին պատուհանէն վերջին անգամ դիտեցի Արարատի աշխարհագրական գեղեցկութիւնը: Չէի ուզեր երթալ, կը գրէ ան: Մինչ օղանաւը թռչէր կ'առնէր, տարօրինակ պարապութիւն մը գացի մէջս: Չգացի, թէ սիրտս Հայաստան կը ձգէի, եւ փոխադրէր՝ հետս կը տանէի Հայաստանի բոլոր հարցերը»:

Լ. ԿԻՒՂՅԱՆ - ՍՐԱՊԵԱՆ

(Շարունակուած՝ Ուրբաթ օրուան մեր թիւէն եւ վերջ)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԹՈՒԲԱՆ ...

Շարունակում՝ 5րդ էջէն

է լինում պարզելու հարցի «խորհրդաւոր» ծալքերը: Մինչ այդ, սակայն, քանատական կառավարութիւնը Իրանի իշխանութիւններին պահանջել է մահացածի դիակի փոխադրումը Բանաստ օդանւանութիւն անելու համար եւ աւելացրել. «Եթէ չուղարկուի թղթակիցի դիակը, երկու երկրների յարաբերութիւնները կը վնասւեն...»:

Ներքաղաքական յատկանշական իրադարձութիւն կարելի է համարել նաեւ բարեկարգչական «Մուշաբ-բաթ» (ընկերակցութիւն) ճակատի հաղորդագրութիւնը՝ ի բողոք ուսանողական-ժողովրդական ներկայացուցիչների «ծաւալուն» ձեռնարկութիւնների դէմ, որոնք ըստ նոյն կուսակցութեան՝ հետապնդում են քաղաքական եւ «կասկածալարոյց» նպատակներ:

Նման իրադարձութիւններին ակնարկելով էր թեւրեւս մտահոգութիւն յայտնում այսօրվազ Մուսաւի Արտապիլին, երբ հէնց ուսանողական միաւորների հետ օրերս կայացած հանդիպման ընթացքում յայտարարեց. «Կրօնի անուամբ կատարուում են այնպիսի քայլեր, որոնք պատճառ են դառնում երիտասարդութեան հեռացմանը կրօնական բմբուռներին»:

* *

Արտաքին քաղաքական ոլորտում կրկին խնդրոյ առարկայ էր Իրանի միջուկային ծրագրերի անվտանգութեան հարցը: Այս գծով հէնց վերջերս նոյն նպատակով Իրան այցելած Սթրաուսն եւ իր ճակատագրի պաշտօնակից Բաւալոնին միաձայն յայտարարեցին, որ Իրանը պէտք է ստորագրի միջուկային զէնքերի չտարածման օրէնքի լրացուցիչ փրոթոգոլը: Ի պատասխան նրանց՝ խորհրդարանի Ազգային անվտանգութեան եւ արտաքին քաղաքականութեան յանձնաժողովի նախագահ Միրտամադին (բարեկարգչական) յայտարարեց. «Մենք առանց նախապայմանների չենք ստորագրելու փրոթոգոլը...»:

Եւ վերջապէս, օրերս Թեհրան այցելեց Ազգային ժողովի պատուիրակութիւն՝ խաչքոյի գլխաւորութեամբ, որը շարունակելու է իրանցի իր գործընկերների հետ քննարկել Պարսից ծոցի կարգավիճակի ճշգրտման երկուստեք հետաքրքրող հարցերը:

ՃԱՏՐԱԿ

1

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՔԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ



ՓՐՈՒՍ Տ. - ՏՈՒՈՆԿ Թ.

2

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՔԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ



ԷՏՈՒՆ Պ. - ՆԻՔՍՆ Թ.

3


ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՔԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ



ՈՒՆԱՆՆ Թ.

4

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՔԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ



ՄԱՐԶ Ո.

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Լուիլիեան

ՏԻՆՆԻՆԻ ԿՐԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ՏԻՆՆԻՆԻ (21 Մարտէն 20 Ապրիլ)

Իրամական հարցը կը մտահոգէ ձեզ, բայց այդքան ալ նեղութեան մատնուած չէք. այդ մասին քիչ մը մտածելով՝ պիտի գտնէք յարմար լուծում մը ձեր ունեցածը տնտեսելու:

ՏԻՆՆԻՆԻ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Եթէ արձակուրդի մէջ էք, դուրս պիտի ելլէք սովորական առօրեայէն ու պիտի գտնէք նոր ճամբաներ ու նոր ծրագիրներ մշակելու առիթ:

ՏԻՆՆԻՆԻ (22 Մայիսէն 21 Յունիս)

Մի՛ ծանրաբեռնուիք աշխատանքով, եթէ ձեր առողջական վիճակը միշտակ աստիճանի վրայ է: Հանգստացէք, եթէ չէք ուզեր, որ շաբթուան վերջը հիւանդանոցը:

ՏԻՆՆԻՆԻ (22 Յունիսէն 23 Յունիս)

Բարեկամի մը մասին ուշադիր հետաքրքրուիւն կը ցուցաբերէք, ու ձեր ակնաչին մէկը անոր վրայ կեդրոնացած է: Անոր խրատներ պիտի տար: Պիտի միջնորդէք զայն, զուարթ մթնոլորտ պիտի ստեղծէք իր շուրջ:

ՏԻՆՆԻՆԻ (24 Յունիսէն 23 Օգոստոս)

Եթէ արձակուրդի չէք գացած, պիտի գոչաք: Աշխատանքի վերաբերեալ պիտի ստանաք լաւ լուր մը, պիտի ուրախանաք: Ձանցեք լաւատես ըլլալ: Օրը բարի է:

ՏԻՆՆԻՆԻ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Արտասահմանի հետ կապուած ձեր ծրագիրները կապտաւոր ընոյթ պիտի ունենան, որովհետեւ աստղերը պիտի պաշտպանեն ձեզ ու ձեր գործուճեութիւնը:

ՏԻՆՆԻՆԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Ձեր մասնավորները, ձեր հաշուեցոյցները աչքի առաջ ունեցէք, օրը օրին վճարեցէք, որպէսզի յաջող աճի նոր վճարման կուտակուեցնէք չունենաք:

ՏԻՆՆԻՆԻ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Եթէ կ'ուզէք, որ ձեր մտնական կեանքը լաւ ընթացայ, կամ ձեր բարեկամին հետ ձեր կապերը լաւ հունի մէջ մտնեն, ճանչցէք ձեր սխալները եւ գանձեք մի՛ կրկնէք:

ՏԻՆՆԻՆԻ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Ձեր մարմինը ճշմաներ ցոյց կու տայ, թէ խնամքի կը կարօտի, իսկ դուք կ'ուզէք չէր առնել զանոնք: Ուշադիր եղէք, հետեւեցէք ձեր առողջութեան պահանջներուն:

ՏԻՆՆԻՆԻ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Աշխատանքի մարզին մէջ նորութիւններ ունիք, հետեւեցէք անոնց եւ կատարեցէք անհրաժեշտը, որպէսզի օրուան աշխատանքները յաջողութեամբ պսակուին:

ՏԻՆՆԻՆԻ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Մրցարած էք ձեր բնակարանին ներքին յարգարանը փոխել, զարգայիք: Ասիկա պիտի արժանանայ ձեր կողակիցին կամ ձեր հարազատներուն գնահատանքին:


ՏԻՆՆԻՆԻ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Պիտի հանգիստը նոր անձնաւորութիւններու, որոնք պիտի օգնեն ձեզ ձեր ասպարեզին վերաբերեալ ձեր գործունէութիւնը բարելաւելու եւ պաշտօնի բարձրացում ունենալու:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՂ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԿԱՀԱՆԴԵՍ

ՃԵՉ ԵՐԱԺԻՇՏ ՌԻՉԵՐՏ ՎԻԹԱԼ՝ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՉ



14-26 Յուլիսին «Պլու Սօթ Քաֆէ» գիշերային սրահայրը կը հիւրընկալէ նիւ երոջի ձեզ փողահար Ռիչըրտ Վիթալը: Փշոյական գործիքներով (թրոմփէթ, հարմոնիքս, ֆլույդը-հոն) ձեզ նուագող այս արուեստագէտը իր երաժշտական ասպարէզին ընթացքին

ելոյթ ունեցած է Պերի Հերիսի, Սէյ Նիսիքոյի եւ Ճօ Մորելլոյի նման հռչակաւոր երաժիշտներու հետ: Իրեն մենակատար ան մաս կապմած է նաեւ Յրանք Սիւսթրայի, Քասնք Պէյսիսի, Տիւք Էլլիսկոնի եւ այլ նուագախումբերու հետ: Ներկայիս Ռիչըրտ Վիթալ կը ղեկավարէ իր անուր կրող ձեզային

հնգեակ մը, որուն հետ ելոյթներով շրջած է Միացեալ Նահանգներու տարածքին, ինչպէս նաեւ՝ Ճապոն եւ Բորնէա: Ան միաժամանակ կը գործակցի «Յրէնք Սիւսթրայ Ճիւսիք» նուագախումբին հետ, իրեն մենակատար: Վերջերս Ռիչըրտ Վիթալ լոյս ընծայեց իր ձեզային կատարումներու առաջին ձայնագրանկար՝ «Տրիմպի», որ մեծապէս գնահատուեցաւ թէ՛ երաժշտական քննադատներու եւ թէ՛ ունկնդիրներու կողմէ:

Ռիչըրտ Վիթալի լիբանանեան ելոյթներուն կ'ընկերակցին լիբանանցի նուագողներէ բաղկացած քառեակ մը (թենոր սաքսֆոն, կիթառ, թմբուկ եւ պաս): Նշենք, որ այս մէկը արուեստագէտին ելոյթներուն աւանդուութիւններուն մաս կը կապմ, սրուած ըլլալով, որ այլ երկիրներու մէջ անոր միշտ կ'ընկերակցի տունեալ երկրէն նուագող մը կամ փոքր նուագախումբ մը:

ԱՅՍՕՐ



- Տօնավաճառ Սուր Էլ Պարզուր, ժամը 18:00էն մինչեւ կէս գիշեր, Նահատակաց հրապարակ, մինչեւ 27 Յուլիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Ժամանակակից երիտասարդ արուեստագէտներ», «Նոս» գ Արք» ցուցասրահ, մինչեւ 25 Յուլիս:
- Արկածախնդրական խաղերու փառատօն՝ «Էքսքրիմ Էտվենցըր փարք», ՊիէԼի մէջ, մինչեւ Օգոստոսի վերջը:
- Ձեռնդման արուեստի գործերու ցուցահանդէս՝ Նատա Սըհնուրի «Արագաքար. Ֆրաքսիոն տը մեմուարը», մինչեւ 31 Յուլիս, Նահատակաց հրապարակ:
- Գեղանկարներու եւ քանդակի ցուցահանդէս՝ մինչեւ 25 Յուլիս, Էհեհի քաղաքապետարան:

ՕՂԵՐԵՒՈՅԹ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ,
21 ՅՈՒՆԻՍ 2003

ՊԵՅՐՈՒԹ
ՄԱՍԱԲ ԱՄՊՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՅԵՐԵԿ՝ 30°C

ԳԻՇԵՐ՝ 22°C

ՌՈՆԱԿՈՒԹԻՒՆ՝
68%

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5492 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

- | | |
|--|--|
| ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ | ՈՒՂԱՄԱՅԵԱՆ |
| 1. Պակասաւոր ծնած - Իշխանական աթոռ: | 1. Զրահ - Խորանէն չգատուող պատանին: |
| 2. Բորոտանոց - Յուցական ածական: | 2. Դարձեալ - Մերձաւոր Արեւելքի պատմական երկիրներէն: |
| 3. Դրկից տուներ - Թատերական տանգրուան - Անծին այծ: | 3. Կրկնուած բաղաձայններ - Վիթխարի: |
| 4. Իգական անուն - Հայկական խազ մը: | 4. Զինը, զուլալ - Յուցական ածական: |
| 5. Հանդերձարան: | 5. Յօնքար - Սարսափելի: |
| 6. Որոշուած գին - Պարտեսակ: | 6. Իրաքեան լրատու գործակալութիւն - Անպատմելի: |
| 7. Ծան - Մաքուր, անբիծ: | 7. Վերստին - Կուր: |
| 8. Պարմանի, մատաղատի: | 8. Ծոպան: |
| 9. Ունայն - Թասէ՛ - Փոքրացնող մասնիկ: | 9. Իգական անուն - Ստացական ածական: |
| 10. Մէկը - Երիտթուրքերու որընկատուող քաղաքը: | 10. Հարսին հայրը՝ փեսային նկատմամբ - Զայնանիշ - Աչք: |
| 11. Արշակ Զոպանեանի հիմնած թերթերէն - Սպասէ՛: | 11. Երկրորդական կին - Արական անուն: |

ԹԻՒ 5491

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ա	Ղ	Ձ	Ա	Կ	Թ	Ա	Ղ	Ա	Ղ
2	Ա	Ր	Ո	Ս	Ե	Ա	Կ	Ա	Ղ	Ղ
3	Ն	Ո	Ր	Ա	Մ	Ո	Ի	Տ	Պ	Ղ
4	Ի	Տ	Ի	Թ	Ի	Ա	Տ	Ա	Կ	Կ
5	Ա	Շ	Մ	Թ	Ն	Ս	Կ	Ա	Լ	Ղ
6	Պ	Ա	Ղ	Ս	Ի	Ր	Ա	Կ	Ա	Ն
7	Պ	Ա	Ղ	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ղ
8	Ե	Մ	Ո	Է	Ր	Ա	Ն	Ղ	Ղ	Ղ
9	Տ	Ա	Ր	Ա	Ֆ	Ն	Ի	Ն	Ա	Ղ
10	Ա	Ղ	Ո	Ի	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ
11	Ժ	Պ	Ի	Տ	Ղ	Ա	Լ	Ա	Ս	Ի

ԱԶԴԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 10 Յունիս 1953

1944ԻՆ ՀԱՅ ՄԸ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԷՐ ԱԹՈՍԱԿԱՆ ԹՆԴԱՆՕԹԻՆ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ



«Տը Ֆիլատելիֆիա Տէյլի Նիուզ» ամբողջական թերթը 4 Յունիսի թիւով կը գրէ:

Աթոմական բնդանօթին յատակագիծը պատրաստեց առաջին անգամ տոքթ. Ռուբէն Էքսերնեան: 1944ին տոքթ. Ռուբէն Էքսերնեան, երկու ամբողջացի մասնագէտներու տոքթ. Ջորն Լոլի եւ տոքթ. Ֆրանք Չափլինի օժանդակութեամբ, արդէն պատրաստած էր բնդանօթի յատակագիծը: Յիշեալ թերթը կը յայտնէ, թէ բնդանօթին շուրջ բացարձակ գաղտնապահութիւն կը տիրէ: Աթոմական բնդանօթ փորձուեցաւ Նեւատայի անապատին մէջ կատարուած վերջին ռազմափորձերուն ընթացքին:

ԱՅՍՕՐ 21 ՅՈՒՆԻՍԻՆ

- 1905.- Ելլորդի մահափորձը Սուլթան Համիտի դէմ:
- 1922.- Ծննալ փաշա կ'ահաբեկուի Ստեփան Ծաղիկեանի եւ ընկերներուն կողմէ, Թիֆլիսի մէջ:
- 1969.- Ամերիկեան «Ափոլլօ 11» տիեզերանաւի անձնակազմէն՝ Նէյ Արմսթրոնկի եւ Էտոնի Ալտրին կ'ըլլան առաջին լուսնեք կատարողները:
- 1982.- Դ. Յ. Ա. Մարտիկներ կ'ահաբեկեն Ռոթերտամի մօտ Թուրքիոյ ընդհանուր հիւպատոսը եւ անոր վարորդը:

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



ՓԻՆԿ ՓՈՆԿ

Հ.Մ.Բ.Մ. ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑԷ... ԻՆՔՉԻՆՔ



Ֆետերասիոնի Գալաթասի Միջլի Տըշտարեւան, բաժակը կը յանձնէ Լիզա Պարիքեան



Ֆետերասիոնի քարտուղար Սալիմ Հած, բաժակը կը յանձնէ Աւո Մունջողլեան



Հ.Մ.Բ.Մ.ի մարզիկները՝ իրենց շահած բաժակներով եւ մետալներով

Լիբանանի փինկ փունկի աղջկանց ամառանային մրցաշարքին աստիճանական մրցումը, որ տեղի ունեցաւ անցեալ Շաբաթ օր, Մոն Լա Սալի մէջ, վերջ գտաւ Լիզա Պարիքեանի յաղթանակով, որ 4-2 արդիւնքով պարտութեան մատնեց այլ Հ.Մ.Բ.Մ.ական՝ Լարա Քէյէպաշեանը:

Այսպիսով, Հ.Մ.Բ.Մ. այս մրցաշարքին շահեցաւ երեք տիտղոս:

Առաջինը շահեցաւ Աւո Մունջողլեան, որ աստիճանական մրցումին 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Հրանտ Պետրոսեանը՝ 91-92ի ծնունդ դասակարգին:

Երրորդ բաժակը շահեցաւ դարձեալ Հ.Մ.Բ.Մ.ի մարզիկներէն Մալիք Թաուիլ՝ 86-87ի ծնունդ դասակարգին մէջ:

ՏԻԵԿՕ ՍԻՍԷՈՆԷ ԼՔԵՑ ԼԱՑԻՈՆ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԱԻ ԻՐ ՆԱԽԿԻՆ ԱԿՈՒՄՔԻՆ

Արժանիքին միջազգային միջնապահ Տիեկո Սիմէոնէ վերադարձաւ իր նախկին ակումբին՝ Աթլետիքո Մատրիտի, լքելով իր ակումբը՝ Լացիո Ռոման: 33 տարեկան Սիմէոնէ, որ երկու տարեկան պայմանագրութիւն մը ստորագրեց Աթլետիքո Մատրիտի հետ, անոր շապիկը կրած էր 1994էն 1997:

Ան նախապէս մասկաւած է նաեւ Սելիլլային եւ Ինթեր Միլանին:



Սիմէոնէ


ՅԵԾԵԼԱՐՇԱԲ. ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՎԱԶՔ

ՈՒԼՐԻՇ ԵՒ ՎԻՆՈՔՈՒՐՈՎ ԼՐՋՕՐԵՆ ԿԸ ՎՏԱՆՁԵՆ ԱՐՄԱԹՐՈՆԿԸ

Ֆրանսայի հեծելարշախ շրջավազքին 14րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ Երէկ, Սէն Ժորժէն՝ Լուտանվիէլի (191,5 քմ.) վերջ գտաւ իտալացի ճիւղերթօ Սիմոնիի (Սալթօ) յաղթանակով. ան այսպիսով այս շրջավազքին ընթացքին առաջին անգամ ըլլալով բարձրացաւ փոփոխմ: Ժամանակն զիջեց առաջ, ան սփրինթով գերազանցեց ֆրանսացի Ռիշար Վիրենքը, արձանագրելով 5 ժամ 31 վայրկեան եւ 52 երկվայրկեան արդիւնք մը:

29 տարեկան Ալեք-

վայրկեանի տարբերութեամբ չկրցաւ դեղին շապիկը իւլեյամերիկացի Լէնս Արմսթրոնգին, որուն դիրքը հետզհետէ կը վտանգուի: Շաբաթ օրուան 13րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ Թոլուզէն՝ Աքս Փլաթօ Տը Պոնսաքը (197,5 քմ.), վերջ գտաւ սպանացի Քարլոս Սասթրէի (Սի. Էս. Սի.) յաղթանակով, որ արձանագրեց՝ 5 ժամ 16



Սասթրէ

հանդիսացաւ 4րդ, մինչ ընդհանուր դասաւորման մէջ անոր անմիջական մրցակիցը՝ գերմանացի Եան Ուլրիշ (Պիանքի) 1'01" ուշացումով հանդիսացաւ երկրորդ:

Ընդհանուր դասաւորման մէջ Ուլրիշ 15 երկվայրկեան տարբերութեամբ ետ կը մնայ Արմսթրոնգին, մինչ 3րդ դիրքը կը գրաւէ Վինոքուրով՝ 18" տարբերութեամբ:

Այսօր տեղի կ'ունենայ 15րդ հանգրուանի մրցումը, Պանիէր - տը Պիկորէն Լիւզ - Արտիտէն (159,5 քմ.), մինչ վնասը՝ Երեքշաբթի հանգիստի օր է՝ Փոյի մէջ:



Սիմոնի

սանտր վինոքուրով (Ղապախստան, Թելեքոմ), որ հանդիսացաւ 6րդ, տխուր էր, որովհետեւ միայն 18 երկ-

վայրկեան եւ 8 երկվայրկեան արդիւնք մը:

Լէնս Արմսթրոնկ 1'08" տարբերութեամբ

ՌՈՆԱԼՏԻՆԻՕ ՄԻԱՅԱԻ ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ


Հակառակ անոր որ անցեալ շաբաթ Պարսելոնայի նախագահ խումար Լափորթա յայտարարեց, թէ Փարիզ Սէն Ճերմէնի մաս կազմող պրազիլցի Ռոնալդինիոյ հետ տարբերութեամբ չէ այլեւս, սակայն պարմանալիքն Ռոնալդինիոն երէկ միացաւ Պարսելոնայի, հինգ տարուան պայմանագրութիւն մը ստորագրելով անոր հետ:

23 տարեկան, Ռոնալդինիոն, որ երէկ ենթարկուեցաւ բժշկական քննութիւններու, այսօր՝ Երկուշաբթի պաշտօնապէս պիտի ներկայացուի լրագրողներուն:

Փարիզ Սէն Ճերմէնի նախագահ Ֆրանսիս Կրէյ, իր կատարած յայտարարութեան ընթացքին ըսաւ, թէ Պարսելոնայի կողմէ առաջարկուած 30 միլիոն էուրոյի (33,5 միլիոն ամերիկեան տոլար) գումարը աւելի նպաստաւոր գտնելով մերժեցին Մանչեսթըր Եունայթեդի կողմէ կատարուած առաջարկը:

Ռոնալդինիոն, որ 39 անգամ կրած է Պարսելոնի ֆութպոլի ազգային խումբին շապիկը, անոր հետ նշանակելով 17 միջազգային կոլ, նախապէս մաս կազմած է Կրէմիո Փորթօ Ալեկրէի (Պարսելոն, 1986էն 2001) եւ Փարիզ Սէն Ճերմէնի (Յուլիս 2001էն Յուլիս 2003):

• ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ




Ռոնալդինիո

Լիզալոնի: Լափորթա աւելցուց, թէ Պարսա համաձայն գտնուեցաւ Ռոնալդինիոյ ամսականին մէկ մասը վճարել:

ՖՈՐՄԱԿԱՆ 1

ՊԱՐԻՔԵԼԼՕ՝ ՍԻԼՎԵՐՍԹՈՆԻ ԿՐԱՆ ՓՐԻՒՆ ՅԵՐՈՍԸ

Ֆորմուլա 1ի 2003ի աշխարհի ախոյեանութեան 11րդ կրան փրին, որ տեղի ունեցաւ Երէկ Սիլվերսթոնի մէջ (Բրիտանիա), վերջ գտաւ պրազիլցի Ռուպէնս Պարիքելլոյի յաղթանակով, որ իր Ֆեռարիով արձանագրեց 1 ժամ 28 վայրկեան եւ 37 երկվայրկեան արդիւնք մը:



Պարիքելլո՝ իր շահած բաժակով

Շաբաթ օրուան փուլ-փուլի շրջանի դիրքը գրաւած Պարիքելլո այսպիսով յաջողեցաւ եղանակի իր առաջին յաղթանակը արձանագրել (իր ասպարէզին՝ վեցերորդը), մեծապէս նպաստելով իր խումբին, որ ընդհանուր դասաւորման մէջ տասը կէտի առաւելութիւն մը ունենայ Ուիլիըմսի վրայ: 11րդ կրան փրին առաջ անոնց միջեւ կէտերու տարբերութիւնը երեք կէտ էր, ինչպստ՝ Ֆեռարիի:


Ուիլիըմսի քոլումպիացի վարորդ խումար Փապիո Մոնթոյա, որ Շաբաթ օր հանդիսացաւ երկրորդ, երէկ գրաւեց 2րդ դիրքը, մինչ 3րդ դիրքը գրաւեց ֆինլանտացի Քիմի Ռայքոնըն (Մաքլարըն):

5րդ լեվիին առաջին անգամ ըլլալով սէյֆթի քարը մտաւ վազքուղի, երբ բրիտանացի Տէյվիտ Քուլթարտի ինքնաշարժին (Մաքլարըն) կարգ մը կտորները ճամբան ծածկեցին:

11րդ լեվիին սէյֆթի քարը դարձեալ տեսնուեցաւ, երբ անձամբ անձ մը (56 տարեկան) յայտնուեցաւ վազքուղիին վրայ, մինչ 20 ինքնաշարժները, որոնք կը սուրային 200 քմ. արագութեամբ, անոր ճիշդ քովէն անցան:

Վայրկեան մը չանցած՝ ան ձերբակալուեցաւ ապահովութեան ուժերու կողմէ:

Եղանակի 12րդ կրան փրին տեղի պիտի ունենայ յառաջիկայ Օգոստոս 3ին՝ Հոբոնիայի մէջ (Գերմանիա):



Ստորեւ՝ երկուսու կրան փրին արդիւնքները.

- 1.- Ռուպէնս Պարիքելլո (Պարսելոն) Ֆեռարի 1 ժամ 28' 37"
- 2.- Խումար Փապիո Մոնթոյա (Քոլումպիա) Ուիլիըմս 5" ուշ
- 3.- Քիմի Ռայքոնըն (Ֆինլանտա) Մաքլարըն 10" ուշ
- 4.- Միքայէլ Շումախըր (Գերմանիա) Ֆեռարի 25" ուշ
- 5.- Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա) Մաքլարըն 36" ուշ
- 6.- Եաննօ Թրոյի (Իտալիա) Ռէնօ 43" ուշ
- 7.- Քրիսթիանօ Տա Մաթթա (Պարսելոն) Թոյոթա 45" ուշ
- 8.- Ենսըն Պարթըն (Բրիտանիա) ՊԱՐ 45" ուշ

Ստորեւ՝ ընդհանուր դասաւորումը.

- | ԳԵՏ | ԳԵՏ |
|--------------------------------------|-----|
| 1.- Միքայէլ Շումախըր (Գերմանիա) | 69 |
| 2.- Քիմի Ռայքոնըն (Ֆինլանտա) | 62 |
| 3.- Խումար Փապիո Մոնթոյա (Քոլումպիա) | 55 |
| 4.- Ռուպէնս Պարիքելլո (Պարսելոն) | 53 |
| 5.- Ռուպէնս Պարիքելլո (Պարսելոն) | 49 |
| 6.- Ֆեռնանտօ Ալոնսօ (Սպանիա) | 39 |
| 7.- Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա) | 33 |
| 8.- Եաննօ Թրոյի (Իտալիա) | 16 |
| 9.- Մարկ Ուեյլըր (Աւստրալիա) | 12 |
| 10.- Ենսըն Պարթըն (Բրիտանիա) | 11 |

Ընդհանուր դասաւորում.

- | ԳԵՏ | ԳԵՏ |
|--------------|-----|
| 1.- Ֆեռարի | 118 |
| 2.- Ուիլիըմս | 108 |
| 3.- Մաքլարըն | 95 |
| 4.- Ռէնօ | 55 |
| 5.- ՊԱՐ | 14 |
| 6.- Ժակուար | 12 |
| 7.- Ճորտըն | 11 |
| 8.- Սաուպըր | 9 |
| 9.- Թոյոթա | 7 |

Balkan Holidays
TRANSLITEX TOURS
ԴԵՊԻ ՎԱՌՆԱ ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐՈՒ
36 ՏԱՐՈՒՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

Varna Summer

2եր քուրսերը կապարեց մեր սեփական օդատարով նուազագոյն սակեր 245\$ ԷՆ սկսեալ (ներառեալ շրջապտուղիին հիմնական ծախսերը)

245\$ սկսեալ

Balkan Holidays
VARNA EXPERT NO. 1
Look after No. 1. Let No. 1. Look after you.
CORNICH MAZRAA WAKF ROUM CENTER - BANK AUDI
TEL.: 1/304553 - 304563 FAX: 9611/310424 BEIRUT - LEBANON

ՅՈՐԴԱՆԱՆ

ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ՝ ԱՅՍՕՐ

ԱՄՄԱՆ, 20 (ԱՅՓ).- Յորդանանի վարչապետ Ալի Ապու Ռադֆայ Կիրակի օր հրաժարականը ներկայացրեց Ապտալա Բ. թագաւորին, որ սակայն պահանջած է, որ վարչապետը մնայ եւ նոր դաշինք մը կազմէ, յայտնեց բարձրաստիճան պաշտօնատար մը: Ան աւելցրեց, որ կառավարութեան նոր կազմը հասանաբար երկուշաբթի օր (այսօր) յայտարարուի:

Հրաժարած կառավարութիւնը կազմուած էր Յունիս 2000ին. կը նախատեսուի, որ կարգ մը նախարարներ, որոնց կարգին է արտաքին գործոց նախարար Մարուան Մուաշէր, մնան իրենց դիրքերուն վրայ:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ԹՈՔԻՕ.- Հարաւարեւմտեան ճափոնի մէջ երէկ տեղատարափ անձրեւներ հողի սահանքներ պատճառած են եւ տուններ ողողած, առնուապէս երկու քաղաքներ: Աւելի քան 10 հոգի անհետացած է:

● ՄՈՆՏԵՆԱԼ.- Թորոնթոյի մէջ 58 տարեկան հիւսիսայինառնի մը ՍԱՐՍԻ գոհ գացած է, Քանադայի մէջ հիւանդութեան կապուած մահերուն թիւը 41ի բարձրացնելով:

● ՊԷՅՅԻՆԿ.- Չինաստանի մեծագոյն գետին՝ Եանկցէի եւ անոր զիլաւոր հարկատուին՝ Հուայ գետին մէջ ջուրերը երէկ պղծուած մակարդակէն բարձր մնացած են, մինչ Պէյճինկի մէջ ուժեղ փոթորիկ մը առնուապէս երկու քաղաքներ: Միւս կողմէ, հարաւարեւմտեան Չինաստանի մէջ 23 հոգի մահացած է եւ 22 ուրիշներ վիրարուած են, երբ օթովուս մը 40 մէքը ձոր ինկած է:

● ՆԱՅՐՈՒՊԻ.- Ամերիկացի 14 պրօսաշրջիկներ Շարք գիշեր քող գացած են Քենիա լեռան վրայ օդանաւի մը շախմատի մասին:

ՔԱՆԻ ՄԸ...

Շարունակուած Յոր ԷջԵԾ

աւանդական է: Նիստը սկսաւ պետական Շուրայի խորհուրդին տուած որոշումներու լուրջ քննարկումով, բայց աւարտեցաւ քարահանքերու, քարի, աւապի եւ աղբերու թղթածրարներու քննարկումով...

Մըրիսիայի հարց տուաւ, որ արդէ՞ք երկրին հարցերը միմիայն քարահանքերն են, թէ ընդհանուր առմամբ յաւելեալ տուրքերու դրութիւնը եւ պետական պարտքը, որ հասած է 35 միլիարդ տոյարի:

● ԵՐԵՍՓՈՒՆՍ Մարուան Ֆարէս երէկ դիտել տուաւ, որ անցեալ Երեքշաբթի օրուան կառավարութեան հարցաքննութեան խորհրդարանի նիստը աշխուժութեամբ լեցուցած է խորհրդարանը:

Ֆարէս մամլոյ ստույգի մը ընթացքին անդրադարձաւ նաեւ քարահանքերու փակման թղթածրարին եւ ըսաւ, որ քարահանքերը ունին բազմակողմանի հարցեր, ինչպէս կենսոյորտային հարցը, որ ուղղակիօրէն առնչուած է տնտեսութեան, ինչպէս նաեւ քարահանքերու մէջ գործող աշխատատեղերու գոյութեան հարցը: Ան կը յորդեց պահպանելու կենսոյորտը եւ հոգատարութեամբ մօտենալու քարահանքերու աշխատատեղերուն շահերուն եւ իրաւունքներուն:

● ԵՐԵՍՓՈՒՆՍ Ալի Պապպի երէկ նկատել տուաւ, որ ներկայ ժամանակաշրջանը բոլոր քաղաքացիներէն կը պահանջէ պետութեան եւ պետական հաստատութիւններուն հանդէպ վստահութիւնը ամրապնդել եւ հեռու մնալ վստահութիւնը խախտող որեւէ քաղաքականութենէ, որովհետեւ ի վերջոյ կարելորագոյնը կը մնայ երկրին գերագոյն շահերու պահպանումը եւ անոր ի նպաստ աշխատանքը:

Պապպի այս յայտարարութիւնները կատարեց Քֆարտունիսի մէջ հանդիսութեան մը ընթացքին Ամալ շարժումի խօսքը փոխանցած ժամանակ, հաստատելով, որ Ամալ շարժումը միշտ պիտի պաշտպանէ ժողովուրդը, կը յորդեց վստահութեան յաւելեալ տուրքեր չբեռնել քաղաքացիներու ուսերուն:

Ետեւի աւելցրեց, որ պետական գանձարկի բացը գոցելու համար քաղաքացիներուն պիտի տեսնուի խախտելը արդար չէ:

● ՍՍՊՐԱՅԻ մէջ նարտի հանդիպում մը վերածուեցաւ լուրջ կրիւի՝ Շահրուր եւ Ապու Ուալի ընտանիքներուն միջեւ. զինեալ բախումները պատճառեցին քոհ մը եւ վեց վիրաւորներ, որոնք անցորդներ էին:

Դէպքը հակակշիռի տակ առնելու նպատակով ներքին ապահովութեան ուժեր միջամտեցին եւ ձերբակալեցին քանի մը խոտմարար:

ՃԱՏՐԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

- 1. 1.Յg7+ Գh5 2.Յxh7# 1-0
2. 1.Յg7+ Գf8 2.Յxh8# 1-0
3. 1.Յxd7 b8 [1...ճd6 2.Յxa7#; 1...Մc4 2.Մd1#; 1...Մb4 2.Մxb5#; 1...Յh3 2.Յxd4# (2.Չxb5#)] 2.Չxb5#
4. 1.Չg2 Գxg2 [1...Չg4 2.ճd3#; 1...Չf5 2.Չe2#] 2.Յh4#

ՏԵՅՎԻՏ ԲԵԼԻԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ «Չ՝ԱՐԳԻԼԵՐ», ՈՐ ԹՈՆԻ ՊԼԵՐ ԿՐՃԱՏԵ ՍԵՌԸ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ ԼՈՆՏՈՆ

ՊԻ. ՊԻ. ՍԻ. Երէկ հաստատեց, որ վէնքերու մասնագէտ եւ քննիչ Տէյվիտ Քէլի, որուն դիակը գտնուած էր Ուրբաթ օր, աղբիւրն էր այն տեղեկութիւններուն, որոնք սփռուած էին կայանին կողմէ եւ ըստ որոնց՝ բրիտանական կառավարութիւնը չափապանցուած ու շինծու փաստեր ներկայացուցած է հանրութեան եւ խորհրդարանին՝ արդարացնելու համար իրաքի դէմ պատերապմը:

ՊԻ. ՊԻ. ՍԻ.ի կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, թէ անցնող քանի մը շաբաթներուն ամէն ճիգ զործ դրած էր կայանը գաղտնի պահելու համար «աղբիւրին» ինքնութիւնը, սակայն Քէլիի մահով կարելոր կը նկատուի իրականութիւնը ըսել:

Քէլի պաշտպանութեան նախարարութեան կենսաբանական վէնքերու խորհրդատուներէն էր: Ան նաեւ ՄԱԿի վէնքերու նախկին քննիչ էր իրաքի մէջ: Ուտիկանութիւնը անոր դիակը գտած էր Ուրբաթ օր, սակայն Շարք օր հաստատուեցաւ, որ Քէլիի է: Ըստ ուտիկանութեան՝ Քէլի անձնասպան եղած է՝ պատճառաւ չունի իշխանաստակներուն երակները պատռելով:



Քէլի

Քէլիի ընտանիքը յայտնեց, որ ան խիստ ու ծանր ճնշումներու կ'ենթարկուէր, յատկապէս, երբ Չորեքշաբթի օր հարցաքննութեան ենթարկուեցաւ խորհրդարանական յանձնախումբի մը կողմէ՝ ՊԻ. ՊԻ. ՍԻ.ի տեղեկագիրին մասին: Քէլի հերքած է, որ ինքն է աղբիւրը:

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր, որ արդէն իսկ կը քննադատուի «շինծու տեղեկութիւններու» հարցին համար, այսօր աւելի ծանր կացութեան մը դիմաց կը գտնուի: Պլէր երէկ յայտնեց, որ պատրաստ է իր վկայութիւնը տալու հետաքննութեան մը, որ կ'առնչուի Քէլիի մահին: Միւս կողմէ, Պլէր ըսաւ, որ որեւէ պատճառ չունի իշխանութեան հրաժարելու: Ան դիտել տուաւ,

որ ինք կը հաւատայ թէ ճիշդ որոշումներ կու տայ իր երկիրին համար: Պլէր մերժեց նաեւ խորհրդարանը արտակարգ նիստի հրաւիրելու կոչերը քննարկելու համար Քէլիի մահն ու անոր վատճառած տագնապը: Խորհրդարանը ամառնային արձակուրդի մէջ է: Պլէր շեշտեց, որ հետաքննութիւնը առաջնորդող դատաւորը պէտք է ժամանակ ունենայ ամբողջացնելու թղթածրարը, հետեւեալ կարիքը չկայ խորհրդարանը ժողովի հրաւիրելու:

Պլէր, որ Հարաւային Քորէա կը գտնուի, մերժեց նաեւ կրճատել այցելութիւնը եւ Լոնտոն վերադառնալ, հակառակ անոր որ ընդդիմադիր ձևով անոր ներկայացուցչները պահանջեցին որ վարչապետը վերադառնայ:

ՏԵՆՔԹԱՇ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ ԿԻՊՐՈՍԸ ՎԵՐԱՄԻԱՅՆԵԼՈՒ ՄԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ

ՆԻԿՈՒՄ, 20 (ԱՅՓ).- Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տէնքթաշ Կիրակի օր քննադատած է Կիպրոսը վերամիացնելու ՄԱԿի ծրագիրը, մինչ կղզիին թրքական հիւսիսային շրջանը կը նշէր թրքական ներխուժումին 29րդ տարեդարձը:

Մինչ այդ, ՄԱԿի հակակշիռին ենթակայ Կանայ Գիծին հարաւը՝ յոյն կիպրական հողամասերու վրայ, առաւօտեան ժամը 5:00ին ահապահները հնչած են՝ իրրեւ սուգի նշան: 20 Յունիս 1974ին, առաւօտեան ժամը հինգուկէսին թրքական ուժերը հասած են հիւսիսային Քիրենիա նահանգի սրբաբնակից հակադարձութիւն 5 օր առաջ յոյն կիպրացիներու կողմէ կատարուած պետական հարուածի մը:

Չինուորական ուժի ցուցադրութեամբ մը, թուրք եւ թուրք կիպրացի զինուորներ տողանցած են հիւսիսային Կիպրոսի մէջ, մինչ թրքական «ԷՖ. - 16» ուղիք ռապիտակապէս օդանաւեր թռիչք կը կատարէին բաժնուած մայրաքաղաքին վերել:

Հանդիսութեան ընթացքին խօսք առնելով, Տէնքթաշ դարձեալ յայտնած է, թէ հիւսիսային Կիպրոսը «յանձնելու» ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի առաջարկը՝ կղզին վերամիացնելու նպատակով՝ թուրք կիպրացիները փոքրամասնութեան մը պիտի վերածեն՝ յոյն կիպրացիներու տիրապետութեամբ պետութեան մը մէջ:

«Հիւսիսային Կիպրոսի հանրապետութիւնը կենդանի պահելը արժանապատուութեան հարց է», ըսած է ան, աւելցնելով. «Եթէ Անանի առաջարկը ստորագրած ըլլայի, հոս գտնուող երկու անձերէն մէկը զարթոյն պիտի դառնար»:

ՄԱԿի ծրագիրը, որ Տէնքթաշի կողմէ Մարտի մերժուած էր, կ'առաջարկէր ներխուժումէն ետք Թուրքիայէն հիւսիսային Կիպրոս հաստատուած թուրքերը հեռացնել:

Յոյն կիպրացիները, որոնք ներխուժումը միջապային ոճի կը նկատեն, «սեւ տարեդարձ»ին առիթով եկեղեցիներու մէջ արարողութիւններու մասնակցած են: Պատերազմին ընթացքին, որ երկու կողմերը շուրջ 3000 քոհ կամ անհետացած յայտն է, շուրջ 200 հազար յոյն կիպրացիներ գաղթական դարձած էին:

Նախագահ Թասոս Փափափուլոյս, ծաղկեպակի վետեղման արարողութենէ մը ետք թղթակցներու յայտնած է, թէ յոյն կիպրացիք վճռած են ամէն գնով իսաղաղ լուծումի մը յանգիլ՝ մասնակցելով ՄԱԿի հովանաւորութեամբ բանակցութիւններուն:

Միւս կողմէ, Տէնքթաշ Շարք օր յայտնած է, թէ յոյն կիպրական կողմը մերժած է իր նորագոյն առաջարկը՝ Նիկոսիոյ օղակայանին վերաբացման գծով: «Ան կ'ըսէ, թէ մեր առաջարկները բարդ են եւ կը նշէ բազմաթիւ այլ պատրուակներ», ըսած է թուրք կիպրացի ղեկավարը:

Փափափուլոյս Ուրբաթ օր առաջարկին գծով պաշտօնակատար իր պատասխանը տուած է ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի յղուած նամակով մը:

ԿԻԼ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒ ՈՒՇԻՆԿԱԹԸՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ

ԱՆԳՈՒՄ, 20 (ԱՅՓ).- Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտալա Կիլ այս շաբաթ Ուաշինթըն պիտի այցելէ՝ երկկողմանի յարաբերութեանց բարելաման ծիրէն ներս, մինչ ՕՍՍՆԻ երկու դաշնակիցներուն միջեւ անվստահութեան մթնոլորտը կը շարունակուի հիւսիսային իրաքի կացութեան գծով:

Կիլ, որ նաեւ փոխ վարչապետ է, Չորեքշաբթի օր Քոնկրէսի դեկլարներու հետ տեսակցութիւն պիտի ունենայ, իսկ Հինգշաբթի օր՝ արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի եւ փոխ նախագահ Տիք Չէյնիի հետ:

Ուրբաթ օր Կիլ պիտի տեսակցի նախագահ Ճորձ Պուշի ապագային ապահովութեան հարցերու խորհրդատու Քոնտոյիլիա Ռայսի հետ եւ Մերձար Արեւելքի Քաղաքականութեան Ուաշինթընի հիմնարկին մէջ խօսք մը պիտի արտասանէ:

Անգարայի մէջ պաշտօնատարներ սկսարկած են պաշտպանութեան նախարար Տոնրու Ռամսֆելտի հետ տեսակցութեան մը կարելիութեան, մինչ թրքական եւ ամերիկեան զինուորականներուն միջեւ յարաբերութիւնները յարուած են հիւսիսային իրաքի մէջ ամերիկեան ուժերու կողմէ թուրք 11 զինուորներու ձերբակալութենէն ետք:

Երկու կողմերը փորձած են տարակարծութիւններուն վերջ տալ՝ դէպքին շուրջ քննութիւն բանակով եւ հրապարակելով միացեալ

հաղորդագրութիւն մը, «ցաւ» յայտնելով զինուորներուն 60 ժամուան արգելափակման գծով: Դէպքին մանրամասնութիւնները չհրապարակուեցան:

Անցեալ Ուրբաթ օր, ամերիկացի բարձրաստիճան երկու պորավորներ, որոնց կարգին՝ իրաքի մէջ գործողութիւններուն պատասխանատու նոր հրամանատար Ճոն Ապիլէյտ Անգարա այցելած է թուրք պաշտօնակիցներու հետ բանակցութիւններու համար՝ յարուածութիւնը փարատելու նպատակով:

Թրքական բանակին սպայակոյտը Շարք օր հաղորդագրութեան մը մէջ ըսած է, թէ երկու կողմերը քննարկած են, թէ «միասնաբար ինչ կարելի է ընել հիւսիսային իրաքի մէջ ՔԱԿ-ՔԱՏԷ սահմանափակ կազմակերպութեան գործունէութեան դէմ»:

Advertisement for Orient Plus travel agency, featuring a map and prices for flights to various destinations like Farna, Cyprus, and Greece.

ՀԱԿԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԵԾ ՅՈՅՅԵՐ...

Շարունակուած Ա. ԷջԵԾ



անոնց վրայ: Յուցարարները կը բացագանչէին հակամարտիկեան արտայայտութիւններ: Անոնք իրենց կարգին կը սպառնային յաջորդ հաւաքը վէնքերով կազմակերպել:

Լարուածութիւնը մեղմացնելու համար, խուճ մը իմամներ ամերիկեան կեդրոնատեղիին մտան, ուր տեսակցութիւն ունեցան գնդապետ Քրիս Բոնիսիի հետ, որ իրենց յայտնեց թէ չ'ուզի խոտմութիւններու բն դարձնել «Արաբիա եւ Արաբի քաղաքը»: Բոնիսի աւելցրեց, որ Սատրոյ այլ քաղաքներէ հետեւորդներ բերած է Նաժմա՝ իր հանգամանքը ամրապնդելու եւ տիրական ներկայութիւն ունեցող անձնատիրութիւն մը դառնալու համար:

Նաժմաֆի ցոյցին նման ցոյց մըն ալ տեղի ունեցած էր Շարք օր, Պաղտատի մէջ, ուր եւս ցուցարարները բացագանչեցին ամերիկացիներու դէմ՝ զօրակցութիւն յայտնելով Սատրոյի:

Միւս կողմէ, զինեալ միջադէպերը կը շարունակուին: Ամերիկացի երկու զինուորներ սպանուեցան երէկ իրաքի հիւսիսային շրջանին մէջ, ուր իրթոններ արձակուած էին անոնց դէմ: Քրտաբնակ շրջաններուն մէջ իսկ Պաղտատէն 100 քմ. դէպի հարաւ, զինեալներ կրակ բացին ՄԱԿի մարդասիրական օժանդակութիւններու խմբակի մը վրայ: Սպանուեցաւ իրաքի վարորդ մը, ՄԱԿի անակապ մէն ալ մէկ հոգի վիրաւորուեցաւ:

● ՍԵՆՏՍԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ յայտարարեց, որ Միացեալ Նահանգներ Ռիատէն չեն պահանջած ուժ ուղարկել իրաք: Արտաքին գործոց նախարար Սէուր Ֆայսալ իշխանը ըսաւ, որ Ռիատ ուժ ուղարկելու ծրագիր մը կը քննարկէ, երբ պահանջը ներկայացուի իրաքեան օրինական կառավարութենէ մը: